

ԱՆՏԻՊ ԷԶԵՐ

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐՏԵՐԵԱՆ

95-րդ Պատրիարք Երուսաղէմի

ԵՐԿՆՔԻ ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆԸ

Յիսուս երկնքի արքայութիւնը կը նմանցնէ Հինգ իմաստուն և Հինգ յիմար կոյսերու օրինակին, որոնք իրենց լապտերներով դիմաւորելու եկեր էին փեսան և հարսը: Յիմարները չէին մտածած բաւարար չափով իւղ առնելու, փեսան կ'ուշանար, և իրենք կ'երթային իւղ հայթայթելու: Անոնց բացակայութեան կու գար փեսան, և պատրաստ եղողները կը մտնէին հարսնարան և կը փակուէր դուռը:

Յիսուս յաճախ բնութենէն կ'առնէր իր լեզուն, կը պճնէր իր խօսքը բնութեան երանգաւորումներով, կը թրմէր դաշտերու բոյրով, կոչ ընելով մարդոց իմացականութենէն աւելի՝ երեւակայութեան, չէր գործածէր վերացական գաղափարներ, անգոյն և ընդհանուր եզրեր, պայմանաւոր նախադասութիւններ, ծածկելու համար ճշմարտութիւնը, այլ յայտնելու զայն բարձրօրէն որակաւոր ձեւերու ներքեւ: Իր առակները բանաստեղծական պատկերներ են յաճախ, բնութենէն մարդոց առօրեայ կեանքէն վերբերուած: Առակաւոր խօսքին հայրենիքը Արեւելքն է, ուր մտածումէն աւելի պատկերն է որ կը խօսի սիրտերուն, իր փոխաբերական ընկալութեամբ:

Տեսանելին հայելին է անտեսանելին: Յորեններու ոսկի արտը, հոսող առուակը, դէպի երկինք բարձրացող ծառը, անտառին խորը երգող թռչունը, Յիսուսին կ'երեւի իբր թափանցիկ պատկեր մը մարդու հոգիին: Տեսանելի այս իրերու և երեւոյթներու ետին ան կը տեսնէր անտեսանելին, այս աշխարհի վրայ կեցած կ'ապրէր երկինքը և իր հետ կը կրէր զայն երկրի վրայ: Սերմնացանն է Ան բոլոր ժամանակներուն, եթէ իր խօսքերը մոռցուին մարդոցմէ, անոնք պիտի ծփան ծովու ալիքներուն՝ և մարդոց գլուխներուն վերեւ դիզուող ամպերուն վրայ, կազմելու անկորնչելի տեսիլքը, ծիածանը բոլոր ժամանակներուն, որովհետեւ անոնք խոստումներ են վաղուան, լոյսը սիրտերուն, կեանքը մարդերուն Աստուծոյ մը ափով նետուած հոգիներուն:

Մեր նպատակին անսայթաք երթալ կարենալու համար, լոյսի պէտք ունինք: Քրիստոնէութեան հետապնդած նպատակը միայն բնագանցական ճշմարտութիւն մը կամ կրօնական խորհուրդ մը չէ, այլ նաեւ գործնական կեանքի բարոյական վիճակ մը: Այս պատճառաւ Աւետարանը որքան վարդապետական, նոյնքան հոգեւոր կրթութեան մատեան մըն է, որ կը ցուցնէ մեզի թէ որոնք են այն միջոցներն ու պայմանները որոնց գործադրութեամբ պիտի կրնանք մեր նպատակին հասնիլ: Հին Ուխտի «Խորանի պաշտամունքը» Նոր Ուխտին մէջ փոխանակուած է «Քրիստոնէական կեանքով», հոն Զոհ կար, հոս՝ Պատարագ: Աստուծոյ համար մեռնելու փոխարէն, որ Հին տնտեսութեան մէջ կը յանձնարարուէր, հոս՝ Աստուծոյ համար ապրիլ կը յանձնարարուի: Ինչ որ հոն խորհուրդ էր և վերացում հոգիի, հոս գործ է և արդիւնաւորումը կեանքին:

«Զնոգիմ մի՛ շիջուցանէք»: Բայց ի՞նչ է այդ հոգին, Աստուծոյ հոգին մարդուն հաղորդուած: Աստուծոյ հոգիին միջնորդը Յիսուս է, անոր անձին սէրը և գործին հաւատքը, սէրը թեւն է զոր Աստուած տուած է հոգիին իրեն բարձրանալու համար: Արդարեւ Քրիստոնէական կեանքը իր լրումին մէջ, կը ցուցնէ թէ Քրիստոսով ոգեւորուած կեանքներուն մէջ կայ և կը գործէ զօրութիւն մը՝ որ լոյս և հուր է միանգամայն: Լոյս մըն է ան, վասնզի կը պայծառացնէ մեր տեսութիւնը Աստուծոյ նկատմամբ: Կը

լուսաւորէ մեր զգացումը, անոր մէջ ցուցնելով մեզի ոչ թէ ճակատագրի տխուր զոհ մը, այլ Աստուծոյ յարգուած և սիրուած արժէք մը: Յետոյ հուր մըն է, որ կը տաքցնէ զմեզ որովհետեւ «հոգիով կարող»ը միայն կրնայ վայելել Աստուածային ծառայութեան բերկրանքը, յոյսին ուրախութիւնը, և նեղութեան մէջ համբերելու քաջութիւնը: Հուր մը որ կը բեղմնաւորէ մեր բարոյական կեանքը, անոր մէջ բողբոջեցնելով, աճեցնելով, և հասունցնելով Աստուծոյ մեզի պարգեւուած շնորհները: Հոգին իր սիրոյն ջերմութիւնը, իր իմաստութեան պայծառութիւնը Աստուած է որ կու տայ մեզի, բայց մենք կը շիջուցանենք զայն, երբ կը մերժենք լսել իր ձայնը, երբ անլսող կը մնանք Աստուծոյ խօսքին: Մարդ կը մարէ կրակը, վառելիք չհայթայթելով, կամ անհոգ և անտարբեր գտնուելով անոր նկատմամբ, նման հինգ յիմար կոյսերուն:

Անդրադարձած էք բնաւ ձեր քովն ի վեր ապրող այն բազմաթիւ մարդերուն, որոնց կեանքը թէ իրենց և թէ աշխարհի համար ոչ մէկ օգտակարութիւն ունի: Մարդեր որոնք կը թողուն, որ անէութեան ծոցը հոսին իրենց մտածումները, սէրերը, ոյժերը, վերջապէս այն բոլոր կարելիութիւնները որոնք մարդուն են: Մարդեր են ասոնք, ամէն ժամանակի պատկանող, որոնք կարծես չեն մտածած, թէ ինչու համար կ'ապրին և թէ ինչ է կեանքի նպատակը: Անոնք կը թողուն որ սահին իրենց օրերը ժամանակի հոսանքին հետ, առանց մտածելու անոնց արժէքին: Մարդը կոչում մը ունի և պարտ է արժեւորել զայն: Մարդը Աստուծոյ իրական պատկերն է և պարտի ինքզինքը մաքրել և թեւաւորել: Աստուծոյ հայրութիւնը՝ մարդուն որդիութիւնը և մարդկային եղբայրութիւնը, գերագոյն իրողութիւններ են մարդկային կեանքին: Առանց ոսկի շղթաներու այդ յօրինումին, չկայ ոչ բարոյական և ոչ ալ իմաստութիւն: Ապրիլ չի նշանակեր միայն շնչել, ի վերջոյ ճշմարիտ խօսքը թէ մարդը հացով միայն չ'ապրիր:

Նկատի ունեցէք պատմութեան մեծ շրջանները, յունական և Հռոմէական մշակոյթները, անոնց չափսեցաւ իմաստութիւն և ոյժ՝ այլ բարոյական, այսինքն այն ներքին ներդաշնակութիւնը որ մարդկային բոլոր կարողութիւնները կը միաձուլէ, առաջնորդելով մարդը Աստուծոյ նմանութեան: Այդ ներքին ոյժին շնորհիւ է, որ մարտիրոսները քաջութեամբ կը կենային բոցերու մէջ և գազաններու ժանիքին տակ: Կրօնքը այս բոլորին միաձուլ պահանջն է, այն ոսկի կամուրջը, որուն վրայէն դարերով մարդկութիւնը կը փորձէ Աստուծոյ երթալ:

Աւետարանը յաճախ Յիսուսի նկարագիրն ու գործը կը գետեղէ բարացուցական բառի մը մէջ, այդ բառերէն է Լոյսը: Առանց լոյսի ոչինչ որոշ և զանազանելի է տիեզերքի մէջ: Աստուածաշունչն ալ կը վկայէ թէ լոյսէն առաջ ամէն ինչ անորոշ էր, անձեւ, միայն Աստուծոյ հոգին գուրգուրացնող կուրծքի մը նման, թուիս էր նստեր անսահման վիհին վերեւ: Լոյսը նայուածքն է Արարիչին: Եթէ թողունք պատկերը և մօտենանք լոյսի կենսական բարոյական իմացումին, պիտի զգանք թէ կեանքը վսեմ և բարձրագոյն լոյս մըն է, զօրութիւնը որ կը քաղցրացնէ իրերն ու էակաները և կը դառնայ կենսատու սնունդը անոնց: Վայ անոր որ չունի այդ լոյսը իր հոգեկան և նիւթական երեսներով, նման յիմար կոյսերուն: Զգայարաններու խանդէն ու կրակէն սկսեալ, մինչեւ իմացականութեան բոցարձակումները՝ որոնք կեանքին թռիչք կու տան և կը պայմանաւորեն լոյսով:

Յիսուս Թաբոր լեռան վրայ կը վերածուի Լոյսի, իր բարձրագոյն էութիւնը կ'աճի և մարմինը ապակիի թափանցութիւն կ'ըստանայ: Թաբորի խորհուրդը Աստուածային յայտնութիւն չէ միայն, այլ նաեւ մարդկային: Յիսուսի մէջ մարդն ու Աստուածը զատորոշող պատը կը միանայ և մարդն ալ իր կարգին կ'աստուածանայ: Այսպէս է եղած պարագան Մովսէսին, Պօղոսին և Ստեփանոսին և ուրիշներու: Երանի այն հոգիներուն, որոնք ունեցած են հոգեկան այս պահերը: Առանց այս մեծ իրականութեան Քրիստոնէութեան երկու մեծ սկզբունքները փրկագործութիւն և կատարելութիւն կը դառնան անկարելի և անիմաստ: Յիսուս եկած էր փառքին և լոյսին տանելու մարդկութիւնը:

Յիսուսի մէջ այդ հրաշքն էր որ տեղի ունեցաւ: Առանց այս մեծ խորհուրդին

մենք չենք կրնար վերահասու ըլլալ Յիսուսի Աստուածութեան: Թաքոր լեռան վրայ Աստուածային ու մարդկային համահաւասար և տեսանելի փառքով իրարու հետ եղան և փառաւորութեան, առանց այս խորհուրդին կարելի չէ հասկնալ Քրիստոնէութիւնը:

Մեծ հոգիներն են, որ կը զգան թէ իրենց բարձրագոյն փորձառութիւնները իրենց ճշմարիտ ապրումներն են, ըզձանքներ, տեսիլներ և ներշնչումները, որոնք մեզ յաճախ հաղորդակցութեան մէջ կը դնեն մեր բարձրագոյն եսին հետ: Մարդը մարդ չէ տակաւին, միայն սակաւաթիւ բարձր հոգիներն են որ արեւը կը տեսնեն: Երբ ամբողջ մարդկութիւնը այս աստիճանին բարձրանայ, այն ատեն պիտի կրնանք ըսել թէ մարդը իբրեւ որդին Աստուծոյ կատարելագործուած է:

Հանդերձեալ կեանքը իրականութիւն է, բայց մեր հոգիին և մարմնին միջեւ եղած յարաբերութիւնը տակաւին յստակ չէ մեզի համար: Չենք գիտեր թէ նիւթն ու միտքը ինչպէս իրարու վրայ կը ներգործեն: Ինչպէս կտան ու ներկը նկարին հոգին չեն: Միտքը մարմնի մահէն վերջ կը շարունակէ տեսել: Արքայութեան գալուստը պիտի իրականանայ երկրի վրայ, այս պէտք է ըլլայ մարդկութեան մեծ աղօթքը, «Քու արքայութիւնը թող գայ, ինչպէս երկինքի մէջ այնպէս ալ երկրի վրայ»:

Ամէն մարդու կեանքին մէջ, առաւել կամ նուազ երկինքը ինքնաբերաբար բացուած է, և միշտ այդ լուսաւոր պահերէն է որ կը սկսի էակի մը հոգեկան անձնաւորութիւնը:

Ճշմարտապէս կը ծնինք այն օրը, երբ խորապէս կը զգանք անակնկալ և լուրջ բանի մը գոյութիւնը մեր կեանքին մէջ: Զգալով թէ տիեզիրքէն մինչեւ Աստուած գերագոյնին աղբիւրը թաքնուած է գիշերի մը ետին, լի հեռաւոր աստղերով: Այսպէս կրնանք ծնիլ մէկէ աւելի անգամներ քիչ մը աւելի մօտենալով մեր Աստուծուն: Վասնզի ի՞նչ է իր խորքին մէջ, այն ամէնը զոր կը կոչենք իմաստութիւն, առաքինութիւն, հերոսութիւն, եթէ ոչ մեծ վայրկեանները կեանքին, երբ մարդ դուրս կու գայ ինքզինքէն, կանգ առնելու ըստ մը գէթ, շեմին վրայ յաւիտենականին, անկէ տեսնելու թէ փոքրագոյն ճիշդ, տեղացի խորհուրդը և տկարագոյն շարժումը չեն իյնար անէութեան մէջ: Անհրաժեշտ է միայն բաց պահել տեսանելիին անտեսանելիին տանող ճամբաները:

Յետպատերազմեան սերունդը կը տառապի այսօր գլխաւորաբար իրարամերժ և իրար ընդդէմ գաղափարներու հոծութենէն, և ասիկա թէ կրօնական, թէ բարոյական և թէ ընկերային մարզերու մէջ: Ազդելու համար ծուռ և անընտել գաղափարներու շարիքէն, մեզի պէտք են ճշմարիտ գաղափարներ, մեր բնութեան և ճակատագրին համաձայն: Այդ գաղափարներու շտեմարանը Աւետարանն է, որ օր մը այքան անուշ և յստակ պատգամեց մարդոց եղբայրութեան և Աստուծոյ Հայրութեան իրականութիւնը, զոր երբեք աշխարհ լսած ըլլար: Վասնզի մինչեւ որ չմիանայ ժողովուրդներու ինքնասիրութիւնը, անհատներու եսապաշտութիւնն ու նիւթապաշտութիւնը, ոչինչ կրնայ իր լաւագոյնին երթալ: Լեզուները խառնուած են այսօրուան աշխարհի մէջ և մարդը հեռացած է Արարիչէն: Մարդկային քաղաքակրթութեան աշտարակը անկատար պիտի մնայ, եթէ Աւետարանի լոյսը չիշխէ սիրտերուն, «Ես եմ լոյս աշխարհի, ուր գայ զկնի իմ ընդ խաւար մի՛ գնացէ, այլ ընկալցի զլոյսն կենաց» (Յովհ. Ը. 12):

Այսօրուան գիտութիւնը և իմաստութիւնը եղբայրացած՝ կը փորձեն իրենց միջոցներով հասնել գերագոյն այդ իսկութեան թափանցումին: Առանց Աւետարանի լոյսին, այսինքն՝ առանց երկնքի օժանդակութեան, մարդը չի կրնար լոյսի վերածուիլ, լոյսի ուղիով դառնալու լոյսի աւազանին: Տխուր բան է փոքրկացնել, և մեր չափերուն իջեցնել Աստուածայինը, ինչպէս կ'ընեն մեր օրերու կեղծ մարգարէները, վասնզի չեն կրնար տեսնել աշխարհ եկող լոյսին գեղեցկութիւնը, ջահի մը պէս բռնուած մեր ողբերգութեան վերել: Ով որ իր հոգին կը բանայ այդ լոյսին, երկինքը փոխադրած կ'ըլլայ իր մէջ: Սիրել լոյսը, փնտռել զայն, խաւարը հալածել է, կ'ըսէ մեր Նարեկացին. որովհետեւ լոյսը նոյնինքն Քրիստոսն է, աշխարհի խաւարին վրայ անշէջ կախուած: Գիտութիւն ըսուածը ուրիշ բան չէ բայց վառօտ և թոյն ապագայ սպանդին, իսկ խաղաղութիւն և յառաջդիմութիւն ըսելով՝ պէտք է հասկնալ հզօր-

ներու գերիշխանութիւնն և տկարներու գերութիւնը: Այդ յաւիտենական լոյսի լապտերէն զատ՝ ոչ մէկ ժամանակաւոր և արուեստական լոյս կրնայ առաջնորդել մեզ Աստուածային ճակատագրին, վերցուր երկինքը աշխարհէն, կեանքը կը կորսնցնէ իր իմաստը և մարդը կը մտնէ շարքին մէջ թանձր իրերուն, լոյսին դէմ անթափանց, որոնք տիեզերական կեանքին խոնարհագոյն սանդուղները կը կազմեն, սակայն մենք հոս եկած ենք այդ դժիւստ գիտութիւնը ապացուցանելու:

Պատմութեան մէջ ոչինչ դիմացած է մարդկային ստեղծագործութիւնէն, Եգիպտոս, Յունաստան գերեզմաններ են միայն, որոնք մարդկային կարելիութիւններու ժամանակաւոր սուգը կ'երգեն, անոնց կը պակսի այն՝ ինչ որ վեր կը մնայ ժամանակէն: Սակայն խաչին ողբերգութիւնը և Աւետարանի լոյսը յաւերժական են: Թէ մտաւոր և թէ ընկերային մարդերու մէջ, մարդկային մտածումով շինուած լոյսերը չկրցին թափանցել իրերու խորքը, և մարդկային օրէնքներէն ծնած վարչակարգերը դարերով գիտութեան մէկ շղթայէն միւսը առաջնորդեցին մարդերը:

Մարդկութիւնը իր օրէնքով չկրցաւ տակաւին Սինայի բարձունքը ելլել և պիտի չկրնայ երբէք Գողգոթան բարձրանալ: Վասնզի առանց տառապանքի և արիւնի չկայ ճակատագրի լուսաւոր գիտակցութիւն և բարձրացում: Կեանքի յառաջդիմութեան ընթացքը կասեցնող, և մարդկութիւնը ճակատներու բաժնած՝ իրարու դէմ նետող գլխաւոր շարժառիթը գաղափարներու տագնապն է, անբուժելի խոցը մեր օրերու կեանքին, որ տակաւ փարախոտիլ կը սկսի:

